«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ

Ռեկտոր՝ Է.Մ. Սանդոյան

№ «15» մայիսի 2026թ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտություն՝ ***031801.00.6 Միջազգային հարաբերություններ***

Կրթական ծրագիր՝ ***031801.01.6 Միջազգային հարաբերություններ (հեռակա)***

Համաձայնեցված է՝

Միջազգային հարաբերությունների և հասարակաքաղաքական գիտությունների ինստիտուտի տնօրեն
Մարգարյան Ե.Հ.

(ստորագրություն)

Համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչի
Գևորգյան Ն.Վ.

(ստորագրություն)

Կրթական ծրագրի ղեկավար
Գևորգյան Ն.Վ.

(ստորագրություն)

1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Բակալավրի կրթական ծրագիր, իրագործվող «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության կողմից «031801.01.6 Միջազգային հարաբերություններ»:

Բակալավրի կրթական ծրագիրը իրագործվում է հեռակա կրթության ձևով:

Կրթական ծրագրով ուսումնառության ժամկետը կազմում է 5 տարի:

Բակալավրի կրթական ծրագրի ծավալը կազմում է 240 կրեդիտ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը, տվյալ կրթական ծրագրի/մասնագիտության շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում:

Կրթական ծրագիրն ուղղված է միջազգային քաղաքականության, դիվանագիտության և միջազգային իրավունքի ոլորտներում խորը գիտելիքներով և գործնական հմտություններով օժտված մասնագետների պատրաստմանը: Ուսանողները ուսումնասիրում են միջազգային հարաբերությունների բարդ ասպեկտները, ներառյալ գլոբալ և տարածաշրջանային խնդիրների վերլուծությունը, միջազգային համագործակցությունը և հակամարտությունների ուսումնասիրությունը: Ծրագիրը ներառում է նաև օտար լեզուների ուսումնասիրումը, ինչը թույլ է տալիս շրջանավարտներին արդյունավետ աշխատել բազմալեզու և բազմազգ միջավայրում:

<u>Ծրագրի նպատակն ու խնդիրները.</u>

«Միջազգային հարաբերություններ» կրթական ծրագրի նպատակն է միջազգային հարաբերությունների ոլորտում ապահովել մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետների համապարփակ և որակյալ պատրաստում, որոնք ունակ են ժամանակակից պայմաններում ստեղծագործորեն լուծելու մասնագիտական գործունեության տեսական և գործնական խնդիրները՝ ապագա մասնագետին անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացման հիման վրա: Ծրագրի նպատակն է պատրաստել միջազգային բարդ խնդիրներ վերլուծելու և լուծելու ունակ

բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնք ունակ են արդյունավետ աշխատել գլոբալիզացիայի համատեքստում, ներկայացնելով իրենց երկրի շահերը միջազգային ասպարեզում, ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպություններում և կառույցներում:

Ծրագրի հիմնական խնդիրները.

1. Միջազգային հարաբերությունների գործնական ասպեկտների վերաբերյալ խորը տեսական գիտելիքների և ուսուցման ապահովում

2. Միջազգային խնդիրների լուծման համար վերլուծական և հետազոտական հմտությունների ձևավորում

3. Միջազգային իրավունքի և համաշխարհային տնտեսագիտության մեջ իրավասությունների զարգացում:

4. Օտար լեզուներով արդյունավետ հաղորդակցման և բանակցությունների ուսուցում:

5. Միջազգային և միջկառավարական կազմակերպություններում, կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններում մասնագիտական գործունեության նախապատրաստում.

Ծրագրի ակտուալությունը ու յուրահատկությունը

Ծրագիրը հատկապես արդիական է գլոբալացման, միջազգային համագործակցության աճի և այնպիսի գլոբալ մարտահրավերների համատեքստում, ինչպիսիք են քաղաքական անկայունությունը, միջազգային ահաբեկչությունը, տնտեսական անկայունություն, բնապահպանական խնդիրներն ու միգրացիոն գործընթացները: Միջազգային հարաբերությունների ոլորտում խորը գիտելիքներ ունեցող մասնագետները պահանջված են մշակել ռազմավարություններ, որոնք կօգնեն հաղթահարել այդ մարտահրավերները: Միևնույն ժամանակ, ծրագիրը հաշվի է առնում տարածաշրջանին հատուկ պահանջները և շրջանավարտներին ապահովում է աշխատաշուկայում պահանջարկ ունեցող գիտելիքներով և հմտություններով:

Ծրագրի յուրահատկությունը

- Միջառարկայական մոտեցում՝ համադրելով միջազգային հարաբերությունների քաղաքական, տնտեսական և իրավական ասպեկտները

- Միջազգային առաջատար համալսարանների հետ պրակտիկայի և փոխանակման ծրագրերին մասնակցելու հնարավորություններ

- Մի քանի օտար լեզուների դասավանդում, այդ թվում՝ անգլերեն, ռուսերեն և այլ օտար լեզուներ ուսանողի ընտրությամբ

- Միջազգային կազմակերպությունների մոդելավորմանն և կոնֆերանսներին մասնակցելու միջոցով գործնական հմտությունների զարգացում

- Արտասահմանյան բուհերի հետ փոխանակման ծրագրերին մասնակցելու հնարավորություն

2.2. Բակալավրի կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են ուսումնական և արտադրողական պրակտիկաներ (նշել աշխատանքային ուսումնական պլանով նախատեսված պրակտիկայի ձևերը)՝

- Ուսումնական պրակտիկայի ձևերը՝ Գիտահետազոտական աշխատանք (կուրսային աշխատանք),
- Արտադրական պրակտիկայի ձևերը՝ Մասնագիտական պրակտիկա, Նախադիպլոմային աշխատանքի պրակտիկա (տեսական ուսուցման ընթացքում)

2.3 Պետական ավարտական ատեստացիայի մասի մեջ կարող է մտնել՝ ավարտական աշխատանքի կատարում

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Միջազգային հարաբերություններ» բակալավրի կրթական ծրագիրն ավարտելուց հետո շրջանավարտը կտիրապետի հետևյալ գիտելիքներին, հմտություններին և կարողունակություններին.

3.1. Գիտելիքներ

1. Տիրապետել միջազգային հարաբերությունների հիմնական ասպեկտներին՝ ներառյալ պետությունների փոխհարաբերությունների վրա ազդող պատմական, քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային գործոններին։
2. Իմանալ միջազգային հարաբերությունների հիմնական դպրոցներն ու տեսությունները (ռեալիզմ, լիբերալիզմ, կոնստրուկտիվիզմ և այլն) և կիրառել դրանք ժամանակակից իրադարձությունների վերլուծության համար։
3. Տիրապետել մեծ տերությունների և տարածաշրջանային ուժերի արտաքին քաղաքական առաջնահերթություններին, ռազմավարական նպատակներին ու շահերին համաշխարհային քաղաքականությունում։
4. Ծանոթ լինել համաշխարհային քաղաքականության ձևավորման պատմական հիմքերին՝ Վեստֆալյան համակարգից մինչև ժամանակակից բազմաբևեռ աշխարհ։
5. Տիրապետել միջազգային իրավունքի հիմքերին՝ ներառյալ նրա հիմնական սկզբունքներին, նորմերին, ինստիտուտներին և դրանց ազդեցությանն արտաքին քաղաքականության ձևավորման վրա։
6. Տիրապետել մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերին, ներառյալ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրին ու դրանց կիրառման մեխանիզմներին։
7. Ծանոթ լինել միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵՄ, ՀԱՊԿ, ԱՊՀ) կառուցվածքին, մանդատին, լիազորություններին և որոշումների կայացման ընթացակարգերին։
8. Ծանոթ լինել դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի հիմնական կոնվենցիաներին ու արձանագրային նորմերին։
9. Ունենալ պատկերացում միջազգային հակամարտությունների դիվանագիտական, քաղաքական-հոգեբանական, սոցիալ-տնտեսական և ռազմական ասպեկտների մասին, ինչպես նաև դրանց կարգավորման մեթոդների մասին։
10. Տիրապետել ինտեգրացիոն գործընթացների հիմնական տնտեսական ու քաղաքական ասպեկտներին, ռազմավարական ինտեգրացիոն նախաձեռնությունների ու դրանց ազդեցությանն աշխարհաքաղաքականության վրա։
11. Տիրապետել համաշխարհային տնտեսական գործընթացներին, գլոբալ բնապահպանական մարտահրավերներին, ժողովրդագրական

փոփոխություններին ու միգրացիոն հոսքերին և դրանց քաղաքական ազդեցություններին։

12. Ծանոթ լինել հիմնական միգրացիոն միտումներին, դրանց պատճառներին ու ազդեցությանը ընդունող և արտաճող պետությունների կայունության ու քաղաքականության վրա։

3.2. Հմտություններ

3.2.1. Վերլուծական և հետազոտական հմտություններ

13. Կարողանալ վերլուծել քաղաքական իրադարձությունները և գործընթացները, վեր հանել դրանց պատճառները, հետևանքները և կապը հասարակական կյանքի մյուս ոլորտների հետ, ինչպես նաև կատարել հիմնավոր կանխատեսումներ։
14. Կարողանալ գնահատել գլոբալ քաղաքական իրավիճակների զարգացման հնարավոր ռիսկերն ու սպառնալիքները՝ կիրառելով SWOT-վերլուծության, սցենարային պլանավորման և այլ ժամանակակից վերլուծական գործիքներ։
15. Կարողանալ դիտարկել միջազգային հարաբերությունները որպես փոխկապակցված տարրերի (պետություններ, միջազգային կազմակերպություններ, ոչ կառավարական դերակատարներ, գլոբալ մարտահրավերներ) ամբողջական համակարգ։
16. Կարողանալ քննադատաբար վերլուծել միջազգային հարաբերությունների արդի տեսությունները, համադրել դրանք իրական աշխարհաքաղաքական իրողությունների հետ և ձևավորել սեփական վերլուծական մոտեցումներ։
17. Կարողանալ վերլուծել տարածաշրջանային և գլոբալ ինտեգրացիոն գործընթացների փոխազդեցությունն ու դրանց ազդեցությունն աշխարհի քաղաքական ու տնտեսական ճարտարապետության վրա։
18. Կարողանալ վերլուծել միջազգային հարաբերությունների ռազմական ու քաղաքական ոլորտների հիմնական զարգացման միտումները, ներառյալ ռազմատեխնոլոգիական փոփոխությունների քաղաքական հետևանքները։

3.2.2. Հաղորդակցական և դիվանագիտական հմտություններ

19. Տիրապետել միջմշակութային և դիվանագիտական հաղորդակցության հմտություններին, ճիշտ կիրառել ծառայողական-դիվանագիտական ոճն ու արձանագրային նորմերը բանավոր ու գրավոր հաղորդակցության ժամանակ։
20. Տիրապետել բանակցություններ վարելու, համոզելու ռազմավարություններ կիրառելու, փոխհամաձայնության հասնելու ու փոխշահավետ պայմանագրեր

կնքելու հմտություններին՝ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերում։

21. Կատարել բարձրորակ թարգմանություններ՝ ճշտորեն փոխանցելով ոչ միայն տեքստի բովանդակությունը, այլ նաև ոճը, հուզական երանգն ու մշակութային ենթատեքստը. կատարել բանավոր թարգմանություններ բանակցություններում, գիտաժողովներում և պաշտոնական միջոցառումներում։
22. Կարողանալ ՋԼՄ-ների տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվություն վերլուծել, փաստերն ու կարծիքները համադրել, կազմել հստակ և տեղեկատվական մամուլի ակնարկներ ու ռազմավարական բրիֆինգներ։
23. Կազմել հստակ ձևակերպումներ պարունակող պաշտոնական փաստաթղթեր (դիվանագիտական նոտաներ, հուշագրեր, արձանագրություններ, պայմանագրեր), ապահովելով իրավական ու արձանագրային ճշտությունը։
24. Տիրապետել ժամանակակից ԻԿՏ գործիքների կիրառման հմտություններին տեղեկատվության հավաքագրման, վերլուծության, ներկայացման, ինչպես նաև թվային դիվանագիտության ոլորտում։

3.3. Կարողունակություն

3.3.1. Ինքնուրույնություն և պատասխանատվություն

25. Կարողանալ ստացած գիտելիքները ճիշտ կիրառել մասնագիտական հանձնարարությունների կատարման ու նպատակներին հասնելու ժամանակ՝ ցուցաբերելով ինքնուրույն դատողություն և քննադատական մտածողություն։
26. Կարողանալ արդյունավետ պլանավորել աշխատանքը, կազմակերպել գործընթացները և բաշխել ռեսուրսները՝ ապահովելով հանձնարարությունների կատարումը սահմանված ժամկետներում ու բարձր որակով։
27. Կարողանալ ինքնուրույն կատարել մասնագիտական հանձնարարություններ, կայացնել հիմնավոր որոշումներ անորոշ կամ բարդ իրավիճակներում, ինչպես նաև ամբողջությամբ պատասխանատվություն կրել սեփական արդյունքների համար։
28. Կարողանալ ճշտել ու ձևակերպել նոր հեռանկարային գաղափարներ ու լուծումներ, դրսևորել ստեղծագործ մոտեցումներ, որոնք արժեք են ստեղծում կազմակերպության կամ հասարակության համար։
29. Տիրապետել ժամանակի, ֆինանսական ու այլ ռեսուրսների արդյունավետ կառավարման հմտություններին՝ ուղղված կազմակերպչական ու անձնային նպատակների հաջող իրականացմանը։

3.3.2. Թիմային աշխատանք և համագործակցություն

30. Ակտիվ մասնակցել թիմային աշխատանքին, արդյունավետ փոխազդել թիմի անդամների, ներառյալ բազմամշակութային կամ բազմազգ կոլեկտիվների հետ, կիսել փորձ ու գիտելիք, հատկացնել դերեր և ապահովել ընդհանուր նպատակի իրագործումը։
31. Կարողանալ կառուցողական կերպով կառավարել կոնֆլիկտները, բանակցել ու միջնորդել՝ ապահովելով կողմերի շահերի հավասարակշռումն ու երկարաժամկետ համագործակցությունը։
32. Ցուցաբերել մշակութային բազմազանության ըմբռնում ու հարգանք, ճկուն կերպով հարմարվել տարբեր աշխատանքային մշակույթներին ու հաղորդակցման ոճերին՝ գործելով ինչպես ազգային, այնպես էլ միջազգային ոլորտներում։
33. Կարողանալ արդյունավետ ներկայացնել ու պաշտպանել մասնագիտական տեսակետ ու վերլուծական եզրակացություններ ինչպես մասնագիտական լսարանի, այնպես էլ հանրության առջև՝ ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով։

3.3.3. Մասնագիտական էթիկա և արժեհամակարգ

34. Ղեկավարվել մասնագիտական էթիկայի, ամբողջականության և թափանցիկության սկզբունքներով դիվանագիտական ու կրթական-հետազոտական գործունեության բոլոր ոլորտներում։
35. Հարգել մարդու հիմնարար իրավունքները, ժողովրդավարական արժեքները, ազգերի ինքնորոշման ու ինքնիշխանության սկզբունքները, դրսևորել պատասխանատու մոտեցում կոռուպցիայի ու կիրառական անազնվության ցանկացած ձևի նկատմամբ։
36. Զգտել շարունակական ինքնակատարելագործման, հետևել ոլորտի արդի զարգացումներին, ակտիվ մասնակցել մասնագիտական ֆորումներին, կոնֆերանսներին ու գիտական երկխոսություններին։

1. Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները

1. Դիվանագիտական
2. Կազմակերպչական-կառավարական

3. փորձագիտական-վերլուծական
4. գիտահետազոտական
5. նախագծային
6. խորհրդատվական

2. Կրթական ծրագրի պահանջարկը.

Ժամանակակից աշխատաշուկան պահանջում է մասնագետներ, ովքեր ունակ են վերլուծել միջազգային իրադարձությունները, կանխատեսել դրանց զարգացումը և արդյունավետ ներկայացնել իրենց երկրների և կազմակերպությունների շահերը միջազգային ասպարեզում: Ռուս-հայկական համալսարանի «Միջազգային հարաբերություններ»-ի ծրագիրը պատրաստում է ինչպես տեսական գիտելիքներ, այնպես էլ գործնական հմտություններ ունեցող մասնագետների:

«Միջազգային հարաբերություններ» ծրագրի շրջանավարտները պահանջված են տարբեր ոլորտներում.

- Դիվանագիտական ծառայություններ և հյուպատոսություններ

- Միջազգային կազմակերպություններ

- Հասարակական կազմակերպություններ. ԶԼՄ-ներ և ուղեղային կենտրոններ

- Կորպորատիվ հատված, հատկապես միջազգային շուկաներում գործող ընկերություններում

- Ակադեմիական և հետազոտական հաստատություններում:

Վերապատրաստման այս ոլորտում ԿԾ յուրացումն ավարտելուց հետո շրջանավարտին շնորհվում է «բակալավր» որակավորում: